

Համառօտիւ օրուան տօնը բացատրելէ ետքը, Վաղ-
դուանցի Զաքարիա պատրիարքին մահուան հարիւր-
ամեակին առթիւ որ լրացած էր ներկայ տարւոյ
մարտ 11-ին, անոր համառօտ մէկ կենսագրութիւ-
նը ըրաւ: Զաքարիա Պատրիարք կանուխէն եկեղե-
ցական ասպարէզին մէջ մտած չէր, ըսաւ. իր ծը-
նողքը կուգէին զինքը ամուսնացնել, բայց ինք
թողլով ընտանեկան յարկը, Եջմիածին գնաց ուր
քիչ վերջը արեղայ ձեռնադրուեցաւ: 36 տարեկան
հասակին մէջ, Զաքարիա Պատրիարք արգէն փոր-
ձառու՝ աշխարհական ամէն կարգի գործերու մէջ,
3—4 տարի վերջը եպիսկոպոս կը ձեռնադրուի Յա-
կորոս կաթողիկոսէ, յետոյ կը զրկուի Թաթաւ
ուր իր պաշտօնը կատարելէ վերջը կը հրաւիրուի
Եջմիածին: ուր երկրորդ անգամ Վ. Պոլսոյ նուիրակ
կը կարգուի. այստեղ կը սկսի իր գործունէութիւ-
նը. Զաքարիա Պատրիարք զգալով որ ազգի մը յա-
ռաջագիծութիւնը միմիայն ուսմունքով և կրթու-
թեամբ կը լրացայ, իր շուրջը կը ժողովէ տեղացի և
գաւառացի երիտասարդներ, որոնք կուգին ուսում
ստանալ. իր կարողութեան չափով՝ ինչ որ ստա-
ցեր էր Մայր Աթոռէն՝ զայն կը սորվեցնէ անոնց,
այն միջոցին ուր եպիսկոպոս և նուիրակ էր Վ.
Պոլսոյ կըլլայ նաև դաստիարակ ու վարժապետ,
և ազգը տեսնելով Եկեղեցւոյ մասին անոր ունե-
ցած նախանձախնդրութիւնը, և կրթասէր ու գոր-
ծունեայ ոգին, Պատրիարքական աթոռը կը բար-
ձրացնէ զինքը 1773 նոյ. 28-ին, Զաքարիա Պատ-
րիարք կը փութայ վանքերը զրկել իր բազմաթիւ
աշակերտները, որոնց մեծ մասը արգէն եկեղեցա-
կան, իր սկսած ուսման և դաստիարակութեան
դորձը տարածելուն համար գաւառներուն մէջ. այս-
պէս ահա մէկ կողմէն իր եկեղեցական աշակերտ-
ները և միւս կողմէ իր աշխարհական աշակերտնե-
րը, ուսում ու դաստիարակութիւն կը տարածեն
ամէն կողմ: Իր Պատրիարքութեան օրով էր որ
շինուած են Թոկատի, Էնկիւրիի, Սրվազի և ուրիշ
տեղերու եկեղեցիները, Այսպէս ահա Զաքարիա
Պատրիարք եղաւ կրթութեան կարևոր սատարող
մը: 1781 մայիս 29-ին հրաժարելով Պատրիարքա-
կան աթոռէն կը քաշուի Պրուսա ուր 9 ամիս մնա-
լէ ետքը վերստին կը հրաւիրուի Պատրիարքական
աթոռը, ուր կը մնայ մինչև իր մահը. օծումը կը
կատարուի Մայր եկեղեցւոյ մէջ և թաղումը Գու-
րուչէձէի եկեղեցին:

Ս. Պատրիարք հայրը յիշեց նաև թէ Զաքա-
րիա Պատրիարք եղած է Արմաշու վանքին վերա-
նորոգիչը, վասն զի տասը տարիներ խեղճ փձակի
մէջ մնալով էր այդ վանքը և Զաքարիա Պատրի-
արք հոն զրկեց իր աշակերտներէն Բարթոլիմէոս
եպիսկոպոսը, որուն քանքովը Արմաշու վանքը քիչ
շատ բարեկարգուիլ սկսաւ:

Ժամերգութեանց աւարտումէն ետքը, հոգե-

հանգստեան հանգիստը պաշտօն կատարուեցաւ:
Զաքարիա Պատրիարքի զերեզմանին վրայ, ի ներ-
կայութեան Աշգեան Տ. Խորէն արքեպիսկոպոսի,
Արծնական Ժողովոյ երկու ատենապետներուն՝ Տ.
Գրիգոր Յովհաննէսեան և Տ. Վահագն՝ Մանկունի
Սրբազաններու, ինչպէս նաև Կրօնադեմոյ և Կ.
Պոլսոյ պատրիարքական փոխանորդ Սրբազաններուն
որոնք Պատարագին ալ ներկայ էին:

— Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիս-
կոպոս Աշտնեան, որուն Վան հասած ըլլալը
հեռագրած էր արգէն Տ. Ստեփան վարդապետ՝ մա-
յիս 22-ին առաւօտ հեռագիր մը ուղղած է Ս.
Պատրիարք Հօր՝ ստիպողաբար խնդրելով որ 300
ոսկիի գումար մը զրկուի Վան, ի նպաստ կարօ-
տեալներու:

— Արարկիր Գաւառական Ժողովը մայիս 2-ին
ի նիստ դումարուելով, առաջնորդական ընտրութեան
ձեռնարկեր և վիճակին առաջնորդ ընտրեր է Տ.
Մուշեղ Ծ. վարդապետը՝ 27 ժողովականներու
26-ին քուէով, այսինքն գրէթէ միաձայնութեամբ:
Տ. Մուշեղ վարդապետ նամակ մը ուղղելով Ս.
Պատրիարք Հօր և Ազգ. Վարչութեան խնդրած է
որ իր անձին վրայ կատարուած ընտրութիւնը չեղ-
եալ նկատուի և ինքը դեռ շարունակէ ժամանակ
մը առաջն. տեղապահի պաշտօն միայն վարել:

Մեր ձեռքն է հասել Վ. Պոլսոյ Ամեն. Պատ-
րիարքի մի նոր ընդարձակ շրջաբերականը, ուր զօ-
րաւոր աստուածաբանական և պատմագիտական հի-
մունքներով կէտ առ կէտ հերքուում են «Մեր ս.
Հարց Գաւառութիւնը» անունով գրքոյկի պատճա-
ռաբանութիւնները, որի մի երկու կէտի դէմ գրել
էինք Արարատի մայիս հ.ում:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Ի՞նչ և ունի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿԵՆԴՐԱՆԻՆ ՄԱՐԴՈՒՅՑ*

(Max Müller.)

Ուստ անգամ փորձեր է եղել մեր խելքը
համեմատելու այն բանի հետ, ինչ որ կատար-
վում է կենդանիների մտքի մէջ, որոնց մասին

* Ինչ որ անցել է համարում մասնաւորապէս մը-
թիւներին եւ նուիրած, այժմ լուրջաբար քնն-
դասարաններին և ընծայվում. հոգեբանական հակում խնդրի

կարծիք է կազմուած: Թէ զորս զշարութիւններ ունին առանց հաւաքառասխան գաղափարների և անունների: Մենք այդպիսի փորձերից օգտուել չենք կարող: Կարող այն պատճառով որ երբեք չենք կարող խմանալ: Թէ ինչ է կատարվում կենդանու մարմի մէջ, թէպէտ հազար ու մէկ բաներ կարող ենք ենթադրել: Փիլիսոփաներից տմանք անհնարին են համարում կենդանուն վերադրել իմացականութիւնը: Իսկ միւսները հաւատար կամ աւելի բարձր են դասում զորան մարդկային ստոր ցեղերից: Գոր օր. Ֆուանցիներցի: Ոմանք ասում են: Թէ կենդանիների ուղեղը աւելի փոքր է, քան մարդուներ, ուրեմն նոցա և մեր մտաւոր գործունէութիւնը դուրս հաստար չի կարող լինել: Իսկ միւսներն ընդամաքանում են: Թէ բոա էականի կենդանիներու ուղեղը կատարելապէս նման է մարդու ուղեղին և թէ լսկ միայն ծաւալը ոչ մի կշիռ չունի: մանաւանդ որ խելօք կենդանիները: Գոր օր. փիլոն ու շուներ, աւելի մեղ աննման են իրանց ուղեղի կազմութեամբ: քան թէ մի քանի յիմար կապիկներին, և թէ ուրեմն միմիայն ուղեղը հոար չի ապին լուծել խնդիրը: Մարդկանցից շատերը ժառանգում են մեծ ուղեղ: Բայց անընդունակ են հանգիստնում այդ բանից օգտուելու: Ինչպէս որ ամենահատարեալգործուած հեռադիտակ ունենալը տպացոյց չի համարուի: Թէ հեռադիտակի տէրը կարողութիւն կունենայ նիւտոնի գէմ մըցելու:

Մի ուրիշ պատճառ, թէ ինչու կենդանիներու մտաւոր կենաց արժէքը գնահատելիս չպէտք է առաջնորդուինք միմիայն նոցա ուղեղի ծաւալով կամ կազմութեամբ: այն է, որ նոցա զգայարանները կարող են այն ատիճան խիստ դարգացած լինել, որ աւելի պակաս կախում կունենան ուղեղից: Մենք գիտենք զոր օր. շների հոտառութեան զարմանալի զօրութիւնը: Եունը հոտով գիտէ, մինչդեռ մենք միայն դատողութեամբ կարող ենք գիտենալ—մի տարբերութիւն: որ նոյն իսկ հնագոյն բանաստեղծների ուշքն է գրտել: Հոմերոսը նկարագրելով Ագիսեոսի դարձը, ասում է, թէ ոչ ոք չճանաչեց մուրացկանի կերպարանքի մէջ բարձրածունդ նախկին տանտիրոջ: Բայց նորա շուն Արգոսից: Արգոսը տկանջները վեր ցցեց պոչը այս այն կողմը խաղացրեց և օտտիեց: Ինչպէս տարբեր է հանգիստնում Ագիսեոսի դայեակը: Սա նախ և առաջ ապշում է արտաքին ամբողջութիւնից, ապա սարից, բայց դարձեալ տատանվում է,

մինչև որ չի տեսնում սպին ծնկի վերայ: Այս էր այն յատուկ նշանը որով ճանաչեց իւր տանին: Կենդանու և մարդու մարմի կանադանութիւնը լուսաբանել ցանկացող ոչ մի հոգեբան չէր կարողանայ կատարել այդ բանը աւելի բանաստեղծօրէն և աւելի ճշգրտութեամբ, քան Հոմերոսը: որ նկարագրեց թէ ինչպէս Ագիսեոսը ճանաչեց իւր շուն Արգոսն ու իւր ստնտու: Եւրիկլէն: մինը հոտառութեամբ, միւսը՝ խելամառութեամբ: մինը ապաւինելով իւր քթին: միւսը՝ իւր խելքին:

Ճանապարհորդներին շատ անգամ հեացրել է այն արագութիւնը որով բաղաքակրթութեան ստորագոյն աստիճանի վերայ կեցած վայրենիները հասնում են գործնական եզրահացութեան: Երբ որ նաւապէս Հէզը հարաւային Ամերիկայի պամպասներում ճանապարհորդում էր, մի անգամ իւր առաջնորդը յանկարծակի կանգնեցրեց նորան և գէպի վեր մտանացոյց անելով՝ դուհե, «առեւծ»: Զարմացած այսպիսի բացականչութիւնից և ձեռքի նշանից գէպի բարձրութիւնը, նա իւր աչքը ուղեց այն կողմերը և գգտարտ նկատեց խիստ բարձրութեան մէջ թռչող անգղիներ: որ պտավում էին մի որոշ ասրածութեան սահմանի մէջ: Հէնց այդ սահմանի տակ իւր և առաջնորդի շրջահայեացքից շատ հեռու, բնկած էր ձիւ գէշը, իսկ գէշի կշտին կար ինչպէս որ առաջնորդը ստուգիւ իմացել էր: առեւծը, որին արիւնախոնձ անգղիները վերելից հետամուտ էին, Այսպիսի անմիջական և գրեթէ յայտ յանդիման ինքնատեսութեամբ դատողութիւն երևում է նաև կենդանիների մէջ: որով երբեմն աւելի դերպաղանցում են մարդուց իրանց ինքնութեւր և անսխալ գուգագրութիւններով կամ յայտնագործութիւններով:

Բնական աւելի ոչ ոք չի կարող հաւատ ընծայել շների ընդունակութեան, և այս ասում եմ փորձերից խրատուած: Մի օր իմ շան Ալադմանին ուղարկեցի Բիւրեղեան պալատը, շների ցուցահանդիսին: Այն տեղ նա մնաց ուրիշ շների հետ ի միտին ամբողջ երեք օր, հազարաւոր մարդկանց հետաքրքրութեան առարկա դառնալով: Երբ որ գնացի նորան տուն բերելու, ես աշխատում էի ոչ միայն հետը չխօսել, այլ չնայել անգամ այն կողմը, ուր որ նա գտնվում էր: Ես պտավում էի խիտ խառնուած ամբոխի մէջ, բայց և այնպէս շունա շատ առաջ, քան կարողացայ նորան մօտենալ, սկսեց ճիգ թափել, որ կտրէ շղթան, որպէս զի հնար ունենայ վտել զէպի ինձ, թէպէտև գրեթէ խեղովում էր: Արդ ինչպէս ճանաչեց նա ինձ: Անշուշտ իւր հոտառութեամբ, բայց այդ հոտառութիւնը նորան հնար պէտք է տար որոշել ին

կաշիւորորիւնը և նկիւնակ մեծ հոշակի յառական պոստառ ևն, որ խնդրի լուծումը աւելի լրացած ներկայացրեցին:

Յան. Բարգմանի:

հաղար ուրիշ մարդկանցից աւելի անվրէպ վստահութեամբ քան մենք կարողանում ենք սևը ջոկել սպիտակից: Իսկ եւս ինչպէս ճանաչեցի իմ շանը, կամ աւելի չու է ասել, ինչպէս կարողացայ ճանաչել նորան հարիւրաւոր սև կամ գորշ, ծուռը թաթեւոր և երկար մէջքերով ուրիշ շներին մէջ: Նոյն և առաջ անշուշտ ընդհանուր անորոշ ապաւորութեան շնորհիւ, ապա մէկ կամ երկու աչքի ընկնող գծերի շնորհիւ, բայց ի հարկէ ոչ այնչափ վստահութեամբ, որով իմ շունը ինձ ճանաչեց—մանաւանդ աւելի հաւանականն այն է, որ ես էլ նորան ճանաչեցի, որովհետեւ նա արդէն առաջինը դիմեց դէպի ինձ:

Ինչ որ ասում ենք նուրը զարգացած հասարակեան մասին, նոյնը յարմարվում է նաև նուրը զարգացած անողորմեան: Մենք ի՞նչպէս իմանանք, թէ ի՞նչ է կատարվում կենդանու մտքի մէջ, որի տեսողութեան զգայարանը աւելի շատ ընդարձակած աւել է, քան իւր ամբողջ ուղեղը, ինչպէս այդ պատահում է մի քանի աղաւնիների մէջ, որոնք նշանաւոր են իրանց երկարատև սառածութիւններով օդի մէջ: Մեզ ի հարկէ ոչ ոք չի արդելի, որ ինչ ուղեանք, այն էլ երեւոյթներ, թէ ինչեր են կատարվում կենդանու մտքի մէջ, սակայն մենք ոչինչ չենք կարող ստուգել գիտենալ:

Բայց մի՞թէ կենդանիները չունին իրար հարգելու հնարներ, լեզուի պէս նշաններ, որով կարելի էր լինէր բան սովորեցնել և նորա մտքի մէջ կատարուածները հասկանալ, և եզրուի մասնաւոր խնդրին գալով, մենք չպէտք է մոռանանք, թէ մի առարկայ ուսանելը գլխովին այլ բան է, քան նոյնը ստեղծել, Եթէ շունը, կամ վեղը, կամ թռչնակը սովորէին Լիարէի Ֆրանսիական լեզուի ամբողջ բառարանը, այս ապացոյց չէր լինի, թէ շները կարողացել են Ֆրանսիական լեզու ստեղծել:

Նոյն իսկ ամենամանրիւ կենդանիները կարող են մեզ ապշեցուցել իրատ և դատ տալ, որ փոխնք մեր կարծիքը նոցա մասին, բայց մենք պէտք է գիտենանք, թէ արդեօք այդ դասերից որոնք գիտակցական են, կամ իսկապէս իմաստական են: Մենք շատ էլ հաւատ չպէտք է ընծայենք այն բաներին, ինչ որ մեզ պատմում են շներին, կատունների կամ մըջիւնների խելքի մասին, որովհետեւ ոչ մի սերող ծնող այնպէս չի յափշտակվում իւր դաւակի արտայայտութիւններից, որպէս մեղուարոյժը կամ մըջիւնատէրը յափշտակվում են իրանց սիրելիներին խելքից: Բայց մենք կը յիշատակենք մի փորձ, որ բացուսիկ արժէք ունի, Բնագիտանքից մէկը պատմում է.

«Մի աւազանի բոլոր մանր ձկները լափող գայլաձուկը նոցանից դատուեցու ապակեայ միջնորմով, այնպէս որ ամենայն անգամ, երբ որ նա փարձում էր յարձակուել նոցա վերայ, իւր դունչն ու պուշուղը ջարդում էր ապակու վերայ, երբեմն այնչափ ուժով, որ երկար ժամանակ մնում էր փեացած, ասեւ թէ անշնչացած: Բայց երբ որ ուշքի էր գալիս, նա զարձեւել կրկնում էր իւր ապաւորութիւնը, թէպէտեւ աւելի և աւելի նուազ դէպքերում, մինչև որ երբ ամսից յետոյ իսպառ թողեց այդ սովորութիւնը: Վեց ամսու չափ նորա այնպէս դատուած մնալուց յետոյ՝ աւազանից դուրս հանեցին անջրպետող ապակեայ միջնորմը, այնպէս որ այնուհետեւ գայլաձուկը զարձեւել կարող էր համարձակ անց ու դարձ անել միւս ձկների մէջ: Իրօք նա սկսեց լողալ նոցա կողմը, բայց էլ երբէք նոցա չէր բռնում և չէր վնասում և միշտ մի մատնաչափ հեռաւորութեամբ պատկառանք կանգ էր առնում և դո՛հ էր մնում, որ կարողանում է աւազանի մէջ թափած կերակրի գէթ միանցորդները լափել: Նա այնպէս լաւ էր մարդուել, որ էլ չէր յարձակվում այն ձկների վերայ, որոնք մի և նոյն աւազանում իւր կենակից և բախտակից էին: Բայց եթէ աւազանի մէջ նոր ծուկ ձգուէր, գայլաձուկը սորան բնաւ չէր խնայում և ագահութեամբ լափում էր: Քառասուն անգամ այս բանը կրկնուեց, և յենթացս այս ժամանակի երբէք չվնասեց իւր բանտարկութեան ընկերակիցներին: Սակայն գայլաձուկի այսպիսի խոհականութիւնը, եզրակացնում է ընադէտը, «դատողութեան վերայ չէր հիմնուած. այդ տեղ երևում էր մի միայն կամքին որոշ ուղղութիւն տալու ձգտում՝ միանման զգայական ապաւորութիւնների ստէպ կրկնութեանց ազդեցութեան պատճառով: Այն ձկների հետ պատկառանք վարմուէքը, որոնց որ ընտելացել էր, կամ որոնց ճանաչում էր, միայն այս է ցոյց տալիս, թէ գայլաձուկը գործում էր անգիտակցաբար: Նոցա տեղը նորա մէջ անշուշտ գրգռում էր կուլ տալու բնական ցանկութիւն, բայց մի և նոյն ժամանակ յիշեցնում էր և այն կսկիծը, որ ինքը նոցա շնորհիւ բազմեց կրել էր, ուստի և միշտ այն ախուր ապաւորութիւնն էր ստանում, թէ անհնարին է տիրանալ իւր տենչած որսին: Այս ապաւորութիւնները աւելի զօրացել էին, քան նորա արիւնիախոնձ ընազդումներն էին, որ և վերջ ի վերջոյ առ ժամանակ ընկճուեցան: Կենդանին գիտէ յարմարուել անախնկալ հանգամանքներին, և այս դէպքում անախնկալ հանգամանք էր ապակեայ միջնորմը»:

Ժամանակ առ ժամանակ մի և նոյն հոգե-

բանական գործը կրկնվում է մանկանց սկզբնա-
կան կրթութեան մէջ և միևնոյն արդեամբ, այն
դասադասութեամբ միայն, որ մենք արամադրը-
վում ենք սնդկելու, իբր թէ մանուկը խորհրդա-
ծել է սկսում աւելի աւաջ, քան կարողանում է
խօսել: Թէպէտ իրօք նորա վերայ ազդում է
միակերպ կրկնուած փորձերի յիշողութիւնը:
Մանկան համար միայն այս կարող ենք ասել, որ
նա արդէն խօսելուց առաջ յիշողութիւն ունի
ինչպէս և դալաճուկն ունի, որ խօսելու կարո-
ղութիւն չունի: Պայլածուկը չի կարող խօսել
սովորել և առհասարակ այնպիսի գործեր կա-
տարել, որի համար լեզու է հարկաւոր: Այս
խորհրդածութիւնը Իւմը հետեւեալ կերպով է
արտայայտել. «կենդանիք եղբայրացնելու չեն
առաջնորդվում բանականութեամբ»: Իսկ Միլլը
ասում է. «ոչ մի հիմք չկայ ստորնագոյն-կենդանի-
ներին վերադրել այնպիսի նշանների գործածու-
թիւն, որով հնարաւոր է դառնում ընդհանուր
նախադասութիւնների յդասումը: Բայց այդ կեն-
դանիք օգտվում են փորձից ու խրատից և խու-
սովում են այն բաներից, որ ցաւ են պատճառել:
Այս միայն մանուկը, այլ և շան լակոտը վախե-
նում է կրակից»:

Իսկ երբեմն կենդանիք աւելի ճարտար են
հանդիսանում, որ հասարակ հասկացողութիւնից
դերազանցում է: Արդեօք այդ բանը անուանենք
ընտելում, ընտան լոյս, աստուածային առաջ-
նորդութիւն թէ այլապէս, բայց յամենայն դէպս
մենք մշտ հիանում ենք և սքանչանում ենք այդ
բանից: Ահա մի օրինակ: *Saturnia Pavonia* ցեղին
պատկանող ճճին (որդունների թագաւորը) իւր
ընկ վերին ծայրում հիւսում է կրկնակի ցանց
պինդ թելերից, որոնք մի ծայրում կապած են շատ
նուրբ թելերով: Այս ցանցը շատ մեղմ ճշման
տակ բացվում է ներսից, բայց խիստ ընդդիմա-
նում է դրսի ճնշումներին: Եթէ ճճին զիտակ-
ցութեամբ և բանականութեամբ գործէր, նա
մէք մարդկային ըմբռնումների համաձայն այս-
պէս պէտք է խորհէր. «թերեւ ժամանակով ես
թրթուր դառնում և ամէն տեսակ պատահակա-
նութիւններից անպաշտպան հանդիսանամ, ա-
ռանց մի հնար ունենալու այդպիսիներից զերծ
մնալու: Թէ վաղօրօք զգուշութիւններ չբանեց-
նեմ, դուք է թրթուրի վիճակիցս թիթեռնիկի ձեռով
այլակերպուիմ, ոչ զէնք և ոչ ոյժ ունենալով
այն ցանցից դուրս ելնելու, որ այժմ՝ մինչև որ
ճճի եմ՝ ինձ պատապարտում է, կամ ուրիշ թի-
թեռնիկների պէս անկարող լինելով մի այնպիսի
հեղուկ արտաշնչել, որ կարողանար մեռաքցնայ
թելերը լուծել, և առ հասարակ շատ հաւանա-
կան է, որ եթէ այժմ ճճի լինելովս հարկաւոր
պատրաստութիւններ չտեսնեմ, որպէս զի հար-

կաւոր դէպքում բանից ազատուելու հնար
ունենամ, ես անշուշտ վազահատ մտնով կարող
եմ ոչնչանալ»: Աւրեմն, նախ քան բանի պէս
չէնքի մէջ ամփոփուելը, ճճին պարզ ի պարզ
պէտք է հասկանայ թէ յետոյ այն տեղից թի-
թեռնիկի ձեռով դուրս գալ կարողանալու համար՝
նա պէտք է իւր բանար այնպէս շինէ, որ զւսից
պաշտպանուած լինի իսկ ներսից հեշտութեամբ
բացուելու յարմարութիւն ունենալ, որ բանար
մեռաքցէ պինդ թելերից այնպէս շինուի, որ մէջ
տեղը ապահով պահէ, իսկ ուրիշ մասերում
ազատութիւն թողնէ: Նա պէտք է կանխու և
այն դիտենայ, որ այս նպատակով մեռաքցիկն
նիւթը մեծ արուեստով պիտի գործածուի: Իսկ
այս ամէնք ճճին չէր կարող սովորել իւր ծնող-
ներից, որովհետեւ նորա աւելի վաղ են ստատիկ,
քան ինքը ծուից դուրս է ելել: Միւս կողմից
նա այս բանը փորձով կամ սովորութեամբ չէր
կարող ուսանել, քանի որ նա այս արուեստու-
թիւնը իւր կենաց մէջ միայն մի անգամ է
ստեղծում, նոյնպէս չէր կարող նմանութեամբ
ևս ձեռք բերել, որովհետեւ երբէք չի ապրել ու-
րիշ ճճիների ընկերութեան մէջ, Իւր որդնային
կենաց ընթացքում չի կարող կատարելագործ-
ուիլ: Նա միայն սողում է ծառերի վերայ, ուր
առաջին անգամ լոյս է տեսել, ուսում է տե-
րւենքը՝ նոցա վերայ իւր ռաքերը պինդ հաստա-
տում է, որ չընկնի գետնի վերայ, և ծածկվում
է տերւենքի տակ, որ անձրեւից չթափուի: Իւր
հին մորթին կամ հին շապիկը վաղը նետել և
փոխել, երբ որ այն նեղացնում է, ահա այս է
եղել նորա բոլոր կեանքը, նորա բոլոր մտածո-
ղութիւնը, նախ քան կարող է սկսել իւր հրա-
շալի պատանքի հիւսումը:—Նա այս երկու գէպ-
քը յիշատակեցի բուսական մանրամասնութիւն-
ներով, որովհետեւ ազոնք կենդանական իմաս-
տութեան լաւ օրինակներ են, և մանուկն ուր
հարկ եմ համարում իմ կարծիքը յայտնել կեն-
դանական կոչուած իմացականութեան մասին:

Յայտնի է, թէ կենդանու և մարդու մտա-
ւոր կարողութիւնների մասին ինչպիսի տար-
բեր և ծայրայիտ կարծիքներ են յայտնուել: Մենք
կարող ենք զոր օր, կարծել, թէ կակղամորթը
(մոլիսիկը) պարզ թուլատարր մարմն է (ուսանց
ոսկրի) և ապրում է կատարեալ մթութեան
մէջ, բայց կարող ենք նոյնպէս կարծել, թէ
որովհետեւ նա ազատ է զգայարանքների միջա-
մատութիւնից, և ուրեմն մարդկային մոլորութիւն-
ների պայմաններից դուրս է, կարող է ունենալ
աւելի կատարեալ ինքնադիտակցութիւն, աւելի
խոր հայեացք անսահմանութեան մասին, և յա-
ւելանական ճշմարտութիւնների աւելի հստակ-
ցողութիւն, քան մարդկային հոգին: Մեծամեծ

փիլիսոփաներից ոմանք համոզուած են եղել, թէ կենդանիներն ոչ այլ ինչ են, բայց եթէ ինքնաշարժակ մեքենաներ, իսկ միւսները ոչ մի էական տարբերութիւն չեն գտել կենդանու և մարդու մէջ, և ոչ նոյն իսկ լեզուի հանգամանքում:

Եթէ մենք ուռումնասիրում ենք այս սեղանը, այս ծաղիկները, այս դորգը, մենք պէտք է ենթադրենք, թէ դորգի վերայ պառկած շունը չի ըմբռնում դորգը սրպէս գորգ, կամ չի պատկերացնում դորգը սրպէս մարդկային ձեռակերտ կամ արուեստի արտադրութիւն: Թէպէտ նա տեսնում և զգում է այն բանը, ինչ որ մենք դորգ ենք կոչում, բայց անշուշտ գիտակցաբար չի ըմբռնում տեսածը, Զգայութիւն և զգայութեան գիտակցութիւն՝ երկու տարբեր բաներ են: Շունը երբէք չի որոշի գորգի գոյները կամ նկարահանութիւնները, երբէք չի նշմարի գորգի խիտ զգալի կարանները կամ կցուածները, երբէք չի յայտնի իւր համարումը գորգի այս կամ այն ձևի, անոնց լաուութեան կամ գեղեցկութեան մասին: Իսկ միւս կողմից ինչպէս բացատրենք, որ մի և նոյն շունը ճանաչում է սանդուղի վերայ բարձրացող տերօջ կամ օտարի քալածքը աւելի առաջ, քան նոցաներն են մրտնում, և ինչպէս եղբակացնում է նա, թէ կատուն անզգալի կերպով անցաւ գորգի վերայ, այն ևս այնպիսի նշանների ցուցումների վերայ հիմնուելով, որ երբէք մեր ուշքը չէին գրաւի կամ մեզ չէին շահագրգռի:

Այս բոլորը ցոյց է տալիս, որ մենք փոխանակ կենդանուն դիմելու, աւելի լաւ կանենք, որ մեզ ինքնեք գիտենք, եթէ ուզում ենք իմանալ, թէ ինչն են կատարվում մեր մտքի մէջ, Այս ճանապարհով մենք կիմանանք, որ մենք մի առաքկայ ըմբռնում ենք միայն այն պայմանով, եթէ նոյնը միւսներից որոշենք բառի կամ նշանի միջնորդութեամբ: Մի խօսքով չկայ բանականութիւն առանց լեզուի, և ոչ լեզու՝ առանց բանականութեան, Եթէ ուզում ենք իմանալ, թէ արդեօք կենդանիք կարող են գաղափարներ ունենալ, նախ և առաջ այն էական խնդիրը պէտք է լուծենք, թէ արդեօք մենք—մարդիկ—կարող ենք գաղափար ունենալ առանց բառերի: Զարմանալի է թէ ինչպէս մարդիկ չեն հաճում ընդունել, թէ առանց բառերի գաղափարները անհնարին են, Կարծես թէ վերաւորեցուցիչ է այն կարծեքը, թէ մեր էութեան ամենահոգեւոր հանգամանքը—մեր մտածմունքը—կախում պիտի ունենայ այնպիսի թշուառ նեցուկներից, ինչպէս որ են բառերը: Բայց միթէ բառը իրօք թշուառ նեցուկ է: Անոնք մտածմունքի խոհական անգամներ են, բայց կարող են մտածմունքի խոհական թէկեր ևս դառնալ, Մենք չենք արանջում, որ

շարժուել չենք կարող առանց ստեղծի: Ինչու ուրեմն ստորնութիւն է համարվում, որ առանց բառերի մտածել չենք կարող:

Բայց միթէ իրօք բառը անբաժանելի է մտքից: Նախ և առաջ խոստովանենք, թէ միտքը գոյութիւն կարող է ունենալ և առանց բառերի, որովհետեւ բառերի փոխանակ կարող են ուրիշ նշաններ դարձածուիլ: Հինգ մատից աւելի ոչինչ հարկաւոր չէ, որ օտար լեզուով խօսող մարդկանց կամ ոչ մի լեզու չխօսող համբներին գաղափար տրուի թուանշան հնգի մասին: Այսպէս մի ձեռքը նշան կարող է դառնալ հնգի համար, երկու ձեռքը՝ տասնի համար, ձեռք ու ոտքերը՝ քսանի համար: Երեք մատ, կամ երեք զարկ, կամ երեք ծափ, կամ արտասանած ձայն լերեք, տրի, trois, drei, կամ հրէարէն շարժ, կամ չինարէն սան—ամէնքն էլ պիտանի կարող են դառնալ: Բայց այս խոստովանելով հանդերձ չմոռանանք, որ այդ բոլոր նշանները և շատ ուրիշ նմանները բառերի պաշտօն են կատարում և ուրեմն տակաւին չի հերքուած, թէ առանց բառերի մտքին անհնարին են:

Ապա մեզ ասում են, թէ երբ որ առաջին անգամ մի տարօրինակ կենդանի ենք տեսնում, որի անունը չգիտենք, մենք այնու ամենայնիւ այդ մասին մտածում ենք, այդ բանը յիշում ենք կամ համեմատում ենք, ոչ մի անուն չուրենալով այդ մասին: Իսկ միթէ տարօրինակ կենդանին անուն չէ: Այդպիսի գէպերում եթէ ոչ խոհական անուն, գէթ կենդանու հասարակ անուն ենք գործածում և անուանում ենք կամ կաթնասուն, կամ թռչուն, կամ ձուկ, կամ մի ուրիշ անունով:

Նախապէս Կուկը զարմանալով պատմում է Պոլինեզիայի կղզեցիներու աղիտութիւնը, որոնք տարօրինակ սխալ գործելով՝ նախ մէջ գտնուած ոչխարներին ու այծերին «թռչուն» էին կոչում: Նոցա գործածած բառն էր մանու: Դա նշանակում է մի իր, որ շարժվում է երկրի վերայ կամ օդի մէջ: Ուրեմն վայրենիները ոչխարն ու այծը թռչուն կոչելով, բնաւ մեզնից ախմար չհանդիսացան, որովհետեւ մենք էլ ուրիշ կերպ չենք ճշնում մի նոր կենդանի ըմբռնել և անուանել: Նոցա օգտուեցին անուն ունեցող մերձաւոր սեռից, այսինքն մանուից, որ նշանակում է կենդանութիւն ունեցող և շարժուող իր և երեւի թէ ժամանակին նոցա վերան կաւելացնեն մի որ և է արքերոյրիս (յայտնի է որ ամենայն իր ուսմանովում է սեռով և տարբերութեամբ): Զիտ համար դիւաւառեան բառը նշանակում է «իւր մէջքի վերայ կրող (սարք)» չորքոտանի կենդանի (սին): Կարմրամորթ հնդկացիները դպրոցի շէնքը անուանում են մի բառով, որ նշանակում է «փակուող

տեղ (սեն), ուր որ կատարվում է կախարդութիւն (սարա), որովհետեւ նոցա կարծեցով գրեթե ուսումը պիղծ արուեստ է, Հռովմայեցիք Պիւսոսի պատերազմի ժամանակ փիղը կարծեցին լուկանեան ցուլ, նոր Զեւանդարեք խողերն ընդունեցին երկար շների տեղ: Ամէն մի քայլ որ դործում ենք մի նոր առարկայ ուղիղ հասկանալու համար, լեզուի քայլ է, և առանց լեզուի հնար չկայ ոչ մի քայլ անելու: Յետոյ երբ որ մեր մտքերը շփոթ և պղտոր են լինում, մենք ինչ ենք անում: Մենք ասում ենք, թէ այդ բաները անճառելի և անպատմելի մտքեր են, որ միայն մօտաւորապէս յայտնել կարելի է, այն ևս փոխարեքութեամբ կամ բանաստեղծօրէն: Երբեմն զգում ենք, որ տհաճութիւնը առաջ է գալիս լեզուի անկատարութիւնից, որ հարկադրում է մեզ դէթ հին բառերի մէջ փնդուել աւելի յարմար բառ, կամ մի նոր բառ ստեղծել, և կամ օտար լեզուի բառ դործածել: Բայց այս ամէնը դարձեալ անպարտք է, թէ անհնարին է մտածել առանց բառերի, թէ մտքերն ու բառերը անբաժանելի են, և թէ ոչ մէկը և ոչ միւսը անկախ գոյութիւն չունի:

Այնուհետեւ չմոռանանք, որ կան բազմաթիւ գաղափարներ, որոնց համապատասխան բառերն եթէ մի լեզուի մէջ կան, միւսի մէջ չկան և ուրեմն ճշդիւ անթարգմանելի են: Հայոց «աղնուական», «ուստաց «բլազորդնի», անգլիացւոց «Ջէնսլմէն» և ֆրանսիացւոց «ժանտիլեօմ» — կարծես թէ մի և նոյն գաղափարներ են արտայայտում, բայց զոգանից իւրաքանչիւրը այնքան յատուկ զգացումներով և յիշատակներով շրջապատուած է, որ հազիւ թէ որ և է ազդ իւր բառը միւս ազգի նշանակութեամբ է դործածում: Այդ բառերի մէջ բովանդակած գաղափարները շատ բարդ են, պատմութեան դարերի ալիքները վերան մի բան են աւելացրել, յղկել են, յարդարել են, և այժմ գոյութիւն ունին և հասկանալի են միայն իւրեանց լեզուի մէջ, կամ յատկապէս միայն ազգային բառով: Իսկ եթէ այդպէս մասնաւորապէս դատուած և ջոխուած գաղափարներից իւրաքանչիւրը միայն մի բառով կարող է արտայայտուել, դարձեալ մի նոր սպացոյց է դառնում, թէ գաղափարներն ու բառերը մի և նոյն կենսեցով են ապրում:

Եթէ դարձեալ մի կտտիւմք մնաց թէ միտքը միայն բառի ձևով է պահվում մեր հոգում մէջ, պէտք է փորձեր անենք: Թող ընթերցողներէց իւրաքանչիւրը մի քանի բառէ ամենամեծ ջանքով մտածէ Գեկարաի այն խօսքը, թէ Cogito, ergo sum (խորհեմ, ուրեմն գտմ), բայց այնպէս, որ ոչ լատինական բառեր անցնեն իրանց մտքում, ոչ համապատասխան հայերէն բառերը

«խորհեմ, ուրեմն գտմ», ոչ ֆրանսերէն բառերը Je pense, donc j'existe, ոչ ռուսերէն բառերը Я думаю, а потому существую, ոչ գերմաներէն բառերը «Ich denke, also bin ich», և ոչ անգլիերէն բառերը «I think, therefore I am». Եւ որովհետեւ ամէնքը սխալ խոստովանին, որ այդ անհրաժեշտ բան է, ուրեմն փորձիք հաստատում է մեր սինգաճը: Բայց գուցէ առարկան, թէ այդ նախադասութիւնը խիստ բարդ է, շուտով մենք կտեսնենք, որ նոյն խոհ այնպիսի ամենապարզ գաղափար, իւշպէս որ է շուն, անհնարին է առանց լեզուի:

Պոլինեզիացիք կարծես աւելի ուղիղ են հասկանում գաղափարի ու լեզուի էութիւնն, քան փիլիսոփաներից շատերը, որովհետեւ նոցա մտածողութիւնը անսուսնում են «փորի մէջ խօսել»: Այս խօսքի մէջ մեծ ճշմարտութիւն կայ: Փորի մէջ խօսել ի հարկէ նշանակում է խօսել առանց ձայն հանելու, կամ որ մի և նոյն է՝ բառեր անձայն արատասնել, որ անմտութիւն է, եթէ չասենք, թէ խօսածը (թէպէտեւ «փորի մէջ» մտածութիւն է, ուրեմն դարձեալ «միտք և բառ» անբաժան:

Փիլիսոփաներից ոմանք ասում են, թէ իրանք կարող են մի պարզ գաղափար մտածել առանց համապատասխան բառն ունենալու, զոր օր հէնց վերը յիշատակած շուն գաղափարը: Պէտք է աչքերը փակել, ահանջները խցել և շունը պահել: Այդպէս կոխուի կիսագիտակցութեան պէս մի վիճակ, և երբ որ շուրջը ամենայն ինչ մթնի և լռէ, այն ժամանակ պէտք է փորձել որովայնախօսութեան նոր փորձը և մտածել առանց բառերի: Սկսում են ամենապարզ դէպքից: Կամենում են մտքի մէջ յղացնել գաղափար... Բայց ես չպէտք է ասեմ, թէ ինչի մասին է գաղափարը, քանի որ այն իրը անանուն է, խոհ եթէ անունը ի յայտ գայ, միշտ պէտք է կուտաւ և դուրս վաճակել, որպէս զի փորձը կատարեալ լինի: Սակայն որպէս գաղափար ահանջում կամաց կասեմ, թէ ցանկանում են մտքի մէջ կոչել շան գաղափարը:

Այդ վախճանով «շուն» բառը այժմ խաղաղ ջնջուած է. собака, hund, chien և միւսները խրատիւ մերժուած են: Ապա սկսվում է փորձը «Վեր կաց դու, ահանջներով և երբեմն պոչով չորքոտանի»: Բայց ախո՞ս, որ կախարդանք արդէն վերջացաւ: Չորքոտանի, ահանջներ, պոչ, երբեմն, ասոնք ամէնքը բառեր են, որ փորձի մէջ անընդունելի էին:

Լատիները վերահաստատվում է և կրկին մի նոր ջանք է սկսվում, այս անգամ չպէտք է առաջ գայ ոչ չորքոտանի կամ կենդանի, ոչ բըրդոտ անասուն և այլն, ներքին գիտակցութիւնը

առեւի և առեւի նսեմանում է և վերջապէս այն տեղ ծաղու՞մ է մի էակի որ քիչ քիչ և աննշմարելի ձևով շան կերպարանք է առնում: Բայց առաջ, «էակ» նոյնպէս մի բառ է, իսկ երբ որ այդ բառը արտասանուի էլ ուրեմն շնորք անանուն չեն լինի:

Մտում է մի փորձ էլ անելու: Չի անում— վում ոչ կենդանի և ոչ էակ. հաստատուում է կատարեալ հանդարտութիւն. ոչ մի շունչ չի լսվում: Մի ինչ որ մտանում է, յայտնվում է երեւոյթ, որի հանդէպ իսկոյն մեր ականջում լըսվում է նորան ճանաչող բան— վառ— վառ— վառ ձայն: Ուրեմն դարձեալ «ձայն», դարձեալ «բառ»: Երեւոյթը— դադարւալը— անունը՝ այստեղ էլ անբաժան հանդիսացան: Թող որ մէկը առանց բառերի մտած է և, եթէ նա ազնիւ մարդ է, կը խոստովանի, որ իւր հոգւոյ վիճակները ճիշդ այնպէս կը ձևանան ինչպէս որ վերը նկարագրուեցաւ:

Ոմանք ևս այսպէս են շարունակում առարկութիւնը. «Եթէ այնքան բազմութիւն լեզուներ կան աշխարհքում, միթէ այդ մի նշան չէ, թէ լեզուն այլ բան է քան միտքը: Բայց ընդհակառակ հէնց այդ հանգամանքը հաստատում է լեզուի և մտքի անբաժանութիւնը: Ձոր օր, օր և գիշերը զանազան լեզուներում զանազան ձայներով են արտայայտվում, որովհետեւ այդ գաղափարները քսան զանազան անուն կարող են ստանալ, այն քսան զանազան ճանապարհների պատճառով, որով անոնք մարդու հոգու մէջ պատկերանում են. մի ազգ անոնց մէջ նշմարում է առաւելապէս լոյս և խառն, միւսը՝ տխրոյի և ցրտոյի, երրորդը՝ զարդուցում և համեցրտոյի, չորրորդը՝ քառոյի և լառոյի, հինգերորդը՝ եղբայր և փոքր, վեցերորդը՝ քառակալ և բռնակալ, և իւրաքանչիւրը համապատասխան անուն պէտք է հնարէ: Ուրեմն ամենայն ինչ կոչվում է այնքան անուններով, որքան եղանակով որ ըմբռնելի է դառնում: Ահու՜հներ լեզուներ լեզուներ պոստոյանում է ոչ թէ մտքի անկախ գոյութիւն լեզուից, այլ ընդհակառակ ցոյց է տալիս, որ մեր հատկացողութեան մէջ փորը ինչ փոփոխութիւնը՝ իսկոյն լեզուի մէջ էլ փոփոխութիւն է առաջ բերում: Մենք այժմ բառերը մեռած բառեր ենք կարծում, բայց երբ որ անոնք նոր էին ծագում, խօսողները շատ լաւ ըմբռնում էին մէջը գաղափարի նրբագոյն կենդանութիւնը: Դարձեալ կրկնում ենք, բառերի բազմազանութիւնն ու լեզուների բազմութիւնը գեղեցիկ ապացոյց են, թէ լեզուն գաղափարական ծագում ունի և թէ միտքն ու բառը նոյնութիւն են կազմում:

Վերջապէս խուլումունքը միթէ չի՞ մտածում

առանց բառերի: Ոչ, նոքա խորհում և մտածում են միայն այնքան, որքան որ այդ բանը սովորում են բառ գործածողներէ, միայն թէ իրանք բառի փոխարէն այլ նշան են գործածում: Ապա թէ ոչ նոքա անասունի աստիճանումն են մտնում: Գեօքսլին ասում է. «Համը ծնածը, թէպէտ մեծ ուղեղ ունենայ և իմացական զօրեղ ընադդումներ ժառանգէ, այնուամենայնիւ կապիկներից էլ պակաս մտաւոր արտայայտութիւնների համար անընդունակ կը լինի, եթէ սպրի միայն համբնեւի ընկերութեան մէջ»:

Արդեօք բառական լուսաբանութեամբ չը պէտք է համարենք, թէ ոչ որ ուղեղ չի մտածում, ով որ չի խօսում, և ոչ որ ուղեղ չի խօսում, ով որ չի մտածում:

Վերջացնենք ինչից որ սկսեցինք. ինչով է զանազանվում մարդը կենդանուց: Բնադէպի աչքում կապիկը այնքան կարող է նմանիլ մարդուն, որ դժուար կը լինի դոցա կազմութիւնները իրարէն որոշել, բայց այս բանը մեզ չի կարող հարկադրել խոստովանելու, թէ մարդը ծագում է կապիկից: Մենք գեռ ևս այն ապացոյցը չունինք, թէ ինչ որ մարդու մէջ գտնում ենք, գտնվում է նաեւ կապիկի մէջ: Բայց մարդը տէր է այնպիսի բանի, որ ոչ մի կենդանի չունի, այն է ինքուի, որ ինչպէս տեսաք մի ուրիշ անուն է բանակամոյթեան համար: Եթէ մարդը առաջ պարզ կենդանի է եղել, դէթ այսքան յայտնի է, որ թէպէտ նա սկսեց այն բանից, ինչից որ կենդանիներն են սկսել, բայց չի վերջացրել այն բանով, ինչով որ նոքա են վերջացնում. մէկը ասանք դառաւ, միւսները միշտ մտային անասուն: Ծիրանը շատ նման է գեղձին, բայց երբեք ծիրանու սերմից գեղձի սերմ չի կազմուի. այս տեղ յաջորդութիւն չկայ, այլ միայն դուզընթացութիւն:

Ս. Ս.

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԺԳ.

Հայագէտ ու սոցիալական Ն. Մառի վերջին մեծ աշխատութիւնը—Сборникъ Пpитчъ Вардана, Վարդանի Առակաղբերը— ինչ առիթ է տալիս ընդհատել երկար լուսթիւնս մի քանի գիտողութիւնների անելու համար: Մառին ընդորոշող բոլոր յատկութիւններն երևում են այս աշխատութեան մէջ՝ ջանասիրութիւն: